ՓԱՍՏԱԲԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴԻ

18.08.2012 13:41

«ՓԱՍՏԱԲԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴԻ» ԳՈՐԾՈՎ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՆ ՈՉ ՄԻԱՅՆ ԱՆՏԵՍԵՑ ՕՐԵՆՔԸ, ԱՅԼԵՎ ՀԱԿԱՍԵՑ ԻՆՔՆ ԻՐԵՆ

Հիշեցնենք, որ 2011թ. հոկտեմբերի 20-ին գազի ցուցմունքներ վերցնող ՀայՌուսԳազարդ ընկերության աշխատակցուհին երկու մյուս աշխատակիցների հետ, առանց զգուշացնելու, հանել էին փաստաբանին պատկանող բնակարանի գազի հաշվիչը, որի արդյունքում դադարեցվել էր բնակարանի գազամատակարարումը: Իմ նախաձեռնությամբ գործը տեղափոխվեց դատարան, ինչի արդյունքում Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը՝ նախագահող դատավոր Սիմիզար Հովսեփյան, 15.05.2012թ.-ի վճռով մասնակի բավարարվեց իմ հայցապահանջը՝ որոշելով բռնագանձել ՀայՌուսԳազարդ ՓԲԸ-ից հօգուտ ինձ 14 690 (տասնչորս հազար վեց հարյուր ինսուն) ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի հատուցում, իսկ հայցապահանջը՝ գազամատակարարումը վերականգնելու, 6000 ՀՀ դրամ՝ որպես էլեկտրական տաքացուցչի ձեռք բերման գումարի, նոյեմբեր ամսվա 15-ից հետո հոսանքի դիմաց բնակարանի տաքացման հետևանքով ավել վճարված գումարի, ինչպես նաև դեկտեմբեր ամսից սկսած յուրաքանչյուր ամսվա համար բնակարանի համար ծախսված հոսանքի արժեքի գումարի՝ բացառությամբ այդ ծախսի 1/3-րդը, մինչև այդ բնակարանի գազամատակարարման վերականգնումը բռնագանձելու և դատական ծախսերը բռնագանձելու պահանջների վերաբերյալ՝ մերժել: Հիշեցնեմ նաև, որ մինչ օրս բնակարանի գազամատակարարումը վերականգնված չէ, անգամ անտեսվել է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող Հանձնաժողովի (պետական մարմին) որոշումը, որով պահանջվել էր վերականգնել իմ բնակարանի գազամատակարարումը:

Այս գործը մի քանի անգամ ներկայացվել է մամուլի հրապարակումներում, որտեղ ի ցույց է դրվել ինչպես ՀայՌուսԳազարդի ապօրինի գործելաոճը, այնպես էլ սույն գործը քննած առաջին ատյանի դատարանի ակնհայտ անհիմն գործողությունները: Իմ գործով (գործ թիվ ԵԱՔԴ/2225/02/11) Վերաքննիչ դատարանն ուներ հետևյալ կազմը՝ նախագահող դատավոր՝ Ամրահի Պետրոսյան, դատավորներ Կարեն Չիլինգարյան, Լևոն Գրիգորյան: Վերաքննիչ դատարանում այս գործով մեկ անգամ վճռի հրապարակում արդեն իսկ նշանակված էր, որը չգիտես ինչու (թեև կռահում եմ...), նորից վերսկսվեց: Վերաքննիչում գործի քննության սկզբնական ընթացքից հստակ կարելի էր եզրակացնել, որ վերաքննիչ բողոքը բավարարվելու էր, ինչի արդյունքում կամրագրվեր ՀայՌուսԳազարդի ապօրինի գործողությունները: Վերաքննիչի առաջին դատական նիստին՝ 28.06.2012թ.-ին, բոլոր երեք դատավորներն էլ, (այդ ժամանակ դատավորներից մեկը Ն. Բարսեղյանն էր, որին էլ հետագայում փոխարինեց դատավոր Լ. Գրիգորյանը) հատկապես նախագահող դատավոր Ամրահի Պետրոսյանը և դատավոր Կարեն Չիլինգարյանը, ՀայՌուսԳազարդի ներկայացուցչին միայն քննադատող հարցեր էին ուղղում, օրինակ «Դուք պատժիչ գործողություններ ե՞ք իրականացնում բաժանորդի նկատմամբ՝ մինչև հիմա չվերականգնելով բնակարանի գազամատակարարումը, կամ թե ո՞ւմ վերահսկողության տակ է գտնվում բնակարանից դուրս եկող գազամատակարարման խողովակները, գազահաշվիչը» և այլն: Ուղղակի հարցերի տարափ էր, որոնք միանշանակ տրամաբանական էին և ցույց էին տալիս ՀայՌուսԳազարդի ապօրինի գործելաոճը: Դե ինչ արած, Վերաքննիչն որոշեց շատ շուտ նշանակել վճռի հրապարակման օր՝ 04.07.2012թ., համոզված եմ՝ փորձելով արագ կերպով վերականգնել բաժանորդիս խախտված իրավունքները, սակայն արի ու տես վճռի հրապարակման օրը վերաքննիչը մտքափոխվեց, և որոշեց, որ իր համար չբացահայտված հարցեր են մնացել, հետևաբար գործը վերսկսվեց: Ահա և վերսկսումից հետո ամեն ինչ փոխվեց և վերաքննիչը 15.08.2012թ-ին իր հակիրճ որոշմամբ մերժեց վերաքննիչ բողոքը, որով ուղղակի ոչ միայն պաշտպանեց առաջին ատյանի դատավոր Սիմիզար Հովսեփյանի կայացված ակնհայտ անհիմն դատական ակտը, այլև գերազանցեց այդ

դատական ակտին՝ իր որոշմամբ անտեսելով օրենքը, և հակասելով նույն Վերաքննիչ դատարանի կողմից կայացված 16.02.2012թ. թիվ ԵԿԴ /2589/02/10 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած որոշմանը: Ընդ որում, այդ որոշումը իմ կողմից վերաքննիչ բողոքում նույնպես նշվել էր: Այդ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ Վերաքննիչ դատարանը արձանագրել էր, մեջբերում եմ՝ ***“….Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 559-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Էներգամատակարարման պայմանագրով պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում պարտավորությունը խախտած կողմը պարտավոր է մյուս կողմին հատուցել պատճառված իրական վնասը (17 հոդվածի 2-րդ կետ)»: Այսինքն՝ օրենսդիրն էներգամատակարարման պայմանագրային իրավահարաբերություններում ևս քաղաքացիաիրավական պատասխանատվությունն ուղղակի կախման մեջ է դնում մեղքի առկայությունից: Այսինքն՝ քանի դեռ չի ապացուցվել կողմի մեղավոր գործողությունը (անգործությունը), նրա նկատմամբ էներգամատակարարման պայմանագրային իրավահարաբերություններում չի կարող առաջ գալ քաղաքացիաիրավական պատասխանատվություն:***

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 555-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ «Այն դեպքում, երբ էներգամատակարարման պայմանագրով որպես աբոնենտ հանդես է գալիս էներգիան կենցաղային սպառման համար օգտագործող քաղաքացին, էներգետիկ ցանցերի, ինչպես նաև էներգիայի օգտագործման հաշվիչ սարքերի պատշաճ տեխնիկական վիճակի և անվտանգության ապահովման պարտականությունը դրվում է էներգամատակարարող կազմակերպության վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով»: Փաստորեն, վերը ներկայացված իրավանորմերի ուժով՝ սույն քաղաքացիական վեճին լուծում տալու համար դեռևս բավարար չէ գազահաշվիչի շրջանցմամբ բնական գազը հայցվորի կողմից օգտագործված լինելու հանգամանքի հաստատված լինելը: Տվյալ դեպքում անհրաժեշտ է պարզել, թե հաշվիչ սարքի պատշաճ տեխնիկական վիճակի և անվտանգության ապահովման պարտականությունն արդյոք օրենսդրությամբ դրված է եղել հայցվորի վրա: Եվ բացի այդ, եթե նման պարտականություն օրենսդրորեն դրված է եղել հայցվորի վրա, ապա արդյոք հաշվիչի անսարքության մեջ առկա է եղել նրա մեղավորությունը: Նշվածի առումով Դատարանը քննություն չի իրականացրել, որի արդյունքում՝ կայացրել է չհիմնավորված դատական ակտ:”

Իսկ ահա իմ գործով Վերաքննիչը բոլորովին հակառակ դիրքորոշում ունի, ուղղակի բառեր չեմ գտնում նկարագրելու համար իմ գործով վերաքննիչի գործողությունները:

ՀայՌուսԳազարդ ընկերությունը բոլորիս քաջ հայտնի Ռուսական ընկերություն է, և ինչ է ստացվում, որ մեր իրավասու մարմինները թեև շատ դեպքերում կարողանում են մեր պետական մարմինների գործողությունները վերահսկել, սաստել, սակայն ոչ ռուսական խոշոր ընկերությունների: ՀայՌուսԳազարդը այն ընկերություններից է, որը կարողանում է իրեն դրսևորել այնպես, ինչպես իրեն է ձեռնտու՝ անտեսելով մեր օրենքները՝ խախտելով մարդու իրավունքները: Սակայն հավատացնում եմ, որ անգամ մեկ քաղաքացու պայքարը կարող է տապալել նման ընկերությունների հակաօրինական գործողությունները, ու պատկերացրեք, որ այդ քաղաքացու շարքերը օր-օրի համալրվում են:

Այդ ամենով հանդերձ, մեր դատական համակարգի նկատմամբ առկա անվստահությունը ոչ թե նվազում է, այլ բարձրանում: Ես այս հրապարակմամբ դիմում եմ նաև ՀՀ Նախագահին, ՀՀ Արդարադատության Նախարարին և բոլոր այն պաշտոնատար անձանց, որոնք քիչ թե շատ, ուղղակի, թե անուղղակի վերլուծում են դատական համակարգի գործունեությունը և իրականացնում վերահսկողություն, և որպես շարքային քաղաքացի և որպես փաստաբան տեղեկացնում, որ էլ ավելի է վատթարանում առանց այն էլ դատական համակարգի անբավարար վիճակը, ինչի արդյունքում անպատժելիությունը, անպատասխանատվությունը օր-օրի աճում են: Քաջ գիտակցում եմ, որ այս գործը դեռ իր վերջնական ավարտին չի հասել, և

դեռևս գործողություններ կան արդարության վերականգման համար, սակայն արդյոք ողջամի՞տ է, որ մենք արդարության վերականգման համար պետք է տարիներով պայքարենք, դիմենք միջազգային ատյաններին, թողնենք մեր երկիրը...: Այդ ճանապարհը խորդ ու բորդ է և մեծամասնության համար անանցանելի: Խոսվում է դատական նոր բարեփոխումների մասին, սակայն ինչ բարեփոխումների մասին է խոսքը, երբ ականատես ենք լինում նման իրավիճակների, որը շատերի մոտ հիասթափություն է բերում: Ինչպես ասում են՝ ավելի լավ է տաս մեղավոր մարդկանց արարքները անպատժելի մնան, քան մեկ անմեղ մարդուն ենթարկեն պատասխանատվության: Իհարկե, դա ծայրահեղություն է, բայց ինչ արած...:

Մեկ որդը կարող է ամբողջությամբ փչացնել մեկ խնձորը, պատկերացնում եք՝ ի՞նչ կարող է անել մեկ անհիմն դատական ակտը, էլ չեմ ասում անհիմն դատական ակտերը: Եթե մի բան մեր դատական համակարգում լավ է լինում , ապա անմիջապես այլ անհիմն դատական ակտերով ամեն ինչ մոռացվում է: Եթե ես, որպես փաստաբան, իմ անձնական գործերով շատ դեպքերում դժվարությամբ եմ կարողանում հասնել արդարության կամ չեմ կարողանում, ապա ինչպես պետք է դա անի ոչ փաստաբանը, ոչ իրավաբանը, շարքային քաղաքացին:

Չեմ ցանկանում մասնագիտական որակումներ և հիմնավորումներ այստեղ բերել, քանզի մոտակա օրերս պատրաստվում եմ ներկայացնել վճռաբեկ բողոք, որտեղ մանրակրկիտ ներկայացվելու են բոլոր հիմնավորումները: Չնայած պետք է ասեմ, որ Վճռաբեկից ակնկալիքներ չունեմ, կարծում եմ, որ իմ բողոքը կվերադարձվի բոլորիս հայտնի պատճառաբանությամբ: Այնուհանդերձ, չեմ ցանկանում այստեղ բացահայտել իմ մարտավարական գործելաոճը, սակայն մեկ բան կարող եմ ասել, որ կանգ չեմ առնելու և շարունակելու եմ բոլոր հնարավոր և անհնարին, սակայն միմիայն օրինական միջոցներով հասնել արդարության:

16.08.2012թ.

Փաստաբան՝ Գևորգ Դավթյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })